

## ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱՒՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵՓՈՒՒՄՆԵՐԻ ՀԻՄՆԱՅԱՐՑԵՐԸ

### Ռաֆայել Եղյան

*ԵՊՀ սահմանադրական իրավունքի ամբիոնի  
դոցենտ, իրավ. գիտ. թեկնածու*

Երկար ժամանակահատված է, ինչ հիմնովին լրամշակվում, փոփոխությունների ու լրացումների է ենթարկվում 1985 թ. դեկտեմբերի 6-ին ընդունված և ներկայումս գործող վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգիրքը (այսուհետև՝ Վարչ. օր.): Սակայն նախագծի ընդունումը լրամշակման պատճառաբանությամբ բազմիցս հետաձգվել է, իսկ գործող օրենսգիրքը մնացել է անմխիթար վիճակում, թեպետ հաճախակի ենթարկվել է փոփոխությունների ու լրացումների: Թվում է՝ օրենսգրքի նախագիծը մշակողները նույնպես հույս չունեն, որ մոտ ապագայում այն կարող է կյանքի կոչվել: Նման հոռետեսության պատճառն այն է, որ գործող օրենսգրքում բավականին ստվարածավալ, սակայն կիսատ-պռատ փոփոխություններ ու լրացումներ են կատարվել նաև ընթացիկ տարվա մարտ ամսին<sup>1</sup>: Կարծում ենք, պետք է ողջունել փոփոխությունները, քանի դեռ այն գործում է, սակայն դրանք միաժամանակ պետք է նպատակաուղղված լինեն իրական բարեփոխումներին:

Բնականաբար, վարչական իրավախախտումների համար պատասխանատվություն սահմանող հիմնական նորմատիվ-իրավական ակտը վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ գործող օրենսգիրքն է: Այն դեռևս առաջին և միակ օրենսդրական մեծածավալ ակտն է, որ կանոնակարգում է վարչական պատասխանատվության ընդհանուր հիմնահարցերը: Անկախությունից հետո հանրապետության պետական և հանրային կյանքում կատարված բարեփոխումներն արմատական նշանակություն չունեցան վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսդրության զարգացման ու կատարելագործման առումով:

Եթե նկատի է առնվել, որ շուտով կընդունվի նոր օրենսգիրքը, և նպատակահարմար չէ փոփոխություններ կատարել, ապա անկախությունից հետո՝ 1993 թվականից ի վեր, գործող օրենսգրքում հատկապես 2011-2013 թվականներին չէին կատարվի 150 փոփոխություններ ու լրացումներ, և գործող օրենսգիրքը չէր վերահրատարակվի 25 մարտի 2013 թվականին: Բացի այդ, ընդունվել են օրենքներ, որոնք սահմանել են վարչական իրավախախտման ու տույժերի նոր տեսակներ և տուգանքների ավելի բարձր չափեր, իսկ առանձին հոդվածներ համապատասխանեցվել են արդի պայմաններին և այլն: Այդ բոլորով հանդերձ՝ Վարչ. օր.-ը ծանրաբեռնվել է ավելորդ անհամաձայնեցված և հակասական իրավական դրույթներով, որոնք մասամբ ժառանգություն են մնացել խորհրդային ժամանակաշրջանից: Պատահական չէ, որ Վարչ. օր.-ի բազմաթիվ դրույթներ բովանդակությամբ և եզրույթներով չեն համապատասխանում ՀՀ Սահմանադրությանը և պետական կառուցվածքին: Շատ հոդվածներ և դրույթներ մեխանիկորեն դադարել են գործելուց և փաստորեն կորցրել են իրենց իրավաբանական ուժը:

<sup>1</sup> Տե՛ս Վարչ. օր.-ի 249-250 էջեր:

Ակնկալելով, որ շուտով կընդունվի վարչական իրավախախտումների վերաբերյալ հանրապետության նոր օրենսգիրքը և այսպիսով անմխիթար վիճակում թողնել գործող օրենսգիրքը, կարծում ենք, առնվազն անհեթեթություն է:

Վարչ. օր.-ի անսփոփ վիճակի ապտճառն այն է, որ անկախության տարիներին չեն ձերբազատվել բազմազան անձիշտ դրույթներից, եզրույթներից ու բառակապակցություններից, որոնք որոշակի դժվարություններ են ստեղծում օրենսգրքի օգտագործման ժամանակ: Մինչդեռ դրանց՝ ուժը կորցրած ճանաչելը երկարատև ու դժվար գործընթաց է, եթե նկատի ունենանք, որ խորհրդային կարգերի փլուզումից բավական ժամանակ է անցել:

Չնայած առայսօր կատարված փոփոխություններին ու լրացումներին՝ օրենսգրքում չեն ամրագրվել իրավաբանական անձանց վարչական պատասխանատվության բնորոշումը և առանձնահատկությունները, սակայն նշված անձանց կողմից զանցանքը մեղավորությամբ կատարելը պարտադիր իրավական հատկանիշ է: Գործող օրենսգրքի թերություններից է նաև այն, որ օրենսդրորեն դեռևս չեն սահմանվել վարչական պատասխանատվության սկզբունքները:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով կանոնակարգվող հիմնախնդիրների հետ առնչվում են նաև մի շարք օրենքներ ու օրենսգրքեր, մասնավորապես՝ «Քաղաքաշինության բնագավառում իրավախախտումների համար պատասխանատվության մասին» (05.05.98), «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» (05.05.98), «Տեղական ինքնակառավարման մասին» (07.05.02) ՀՀ օրենքները, ՀՀ մաքսային օրենսգիրքը (06.07.00), ՀՀ դատական օրենսգիրքը (28.11.07), ՀՀ վարչական դատավարության օրենսգիրքը (05.12.13) և այլն:

Վարչ. օր.-ը բազմաթիվ փոփոխություններից ու լրացումներից հետո էլ ոչ պատշաճ վիճակում է: Մասնավորապես՝ չնայած գործող օրենսգիրքը վերնագրված է «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգիրք», սակայն այն 2007-2013 թթ. երեք անգամ վերահրատարակվել է փոփոխություններով ու լրացումներով, բայց երկու անգամը՝ աղավաղված վերնագրով. 2009 թ.՝ «Հայաստանի Հանրապետության վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգիրք» (պաշտոնական վերահրատարակություն) և 2013 թ.՝ «Հայաստանի Հանրապետության վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգիրք» (կազմի վրա), իսկ տիտղոսաթերթի վրա՝ «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգիրք»: Ի դեպ, անհրաժեշտ է նկատի ունենալ, որ Վարչ. օր.-ի անվանումը երբեք փոփոխության չի ենթարկվել. «ԽՍՀ»-ն պարզապես փոխվել է «ՀՀ» -ի: **Այսպիսով, Վարչ. օր.-ը պետք է օգտագործվի միայն «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգիրք» վերտառությամբ:** Այլ աղբյուրներում նույնպես Վարչ. օր.-ի անվանումը աղավաղված է տրված<sup>2</sup>: Նշված ոչ ճիշտ տարբերակներն իմաստային աղավաղումներ են առաջացնում. ստացվում է, որ վարչական իրավախախտումները Հայաստանի Հանրապետությանն են:

Գործող Վարչ. օր.-ում խառնաշփոթ է առաջացրել նաև այն, որ դրանում մի շարք փոփոխություններ ու լրացումներ են կատարվել, ինչպես նաև ուժը կորցրած են ճանաչվել նախկին ԽՍՀ Միությանը վերաբերող որոշ եզրույթներ և այլ բառակապակցություններ ու հոդվածներ, իսկ առանձին հոդվածներում և մասերում դրանք անփոփոխ են

<sup>2</sup> Տե՛ս ՀՀ գործող օրենքներ, 1985-1997թթ., Գիրք 1, Երևան, 2007թ., էջ 7:

մնացել:

Նշված փոփոխություններով ու լրացումներով ուժը կորցրած են ճանաչվել դեռևս օրենսգրքում օգտագործվող խորհրդային ժամանակաշրջանի որոշ եզրույթներ, ինչպես նաև օրենսգրքի այլ թերություններ: Սակայն համակարգված ձևով ձեռքագատվել դրանցից, պարզվում է, ամբողջությամբ և պատշաճորեն չի իրականացվել: Օրենսգրքի մի քանի տասնյակ հոդվածներում դեռևս պահպանվել են այդ կարգի տարբեր թերացումներ: Այդ է պատճառը, որ օրենսգրքի բազմաթիվ հոդվածներ չեն համապատասխանում հանրապետությունում ձևավորվող նոր հասարակական հարաբերություններին և բովանդակությամբ ու եզրույթներով հնացել են: Օրինակ, ԽՍՀ Միություն (ԽՍՀՄ), ԽՍՀՄ միջազգային պայմանագրեր, ԽՍՀՄ օրենսդրական ակտեր, ԽՍՀՄ (պետական) սահման, ԽՍՀՄ Պերագույն խորհրդի նախագահություն, ԽՍՀՄ Մինիստրների խորհրդի որոշում, ԽՍՀՄ դատախազություն, ԽՍՀՄ առողջապահության նախարարություն, ԽՍՀՄ արդարադատության նախարարություն, ԽՍՀՄ մաքսային օրենսգիրք, ինչպես նաև սոցիալիստական իրավագիտակցություն, սոցիալիստական համակեցության կանոններ, խորհրդային օրենքներ, խորհրդային իրավակարգ, սոցիալիստական օրինականություն, սոցիալիստական սեփականություն (9, 16-18, 22, 23, 27-29, 32, 33, 205, 215-218, 246, 250, 252, 259, 261-265, 281, 287, 298, 302, 309, 311, 326 հոդվածներ) և այլն:

Վարչ. օր.-ի մի շարք հոդվածներում դեռևս պահպանվել են նաև հանրապետական պետական մարմիններին տարբեր ժամանակահատվածներում տրված ներկայումս այլ անվանումները: Այսպես, ՀՀ Պերագույն խորհրդի նախագահություն, միութենական կամ ինքնավար հանրապետությունների Պերագույն խորհրդի նախագահություն, ՀՀ նախարարների խորհրդի որոշումներ, ՀՀ տրանսպորտի և հաղորդակցության նախարարություն, ՀՀ կապի նախարարություն, ՀՀ ազգային անվտանգության պետական վարչություն, ներքին գործերի մարմին (227, 227<sup>1</sup>, 237, 243, 246, 264, 267, 283-284 հոդվածներ) և այլն:

2006 թ. դեկտեմբերի 21-ին ՀՀ օրենքով ուժը կորցրած է ճանաչվել ՀՀ պետլեռտեխսկոդության փոքրաչափս նավերի պետական տեսչության մասին 228 հոդվածը, սակայն անտեսելով դա՝ օրենսգրքի 314 հոդվածի 2-րդ մասը սահմանել է. «Փոքրաչափս նավեր վարելու իրավունքից զրկելու մասին որոշումն ի կատար է ածվում սույն օրենսգրքի 228 հոդվածում նշված պաշտոնատար անձանց կողմից», իսկ 315 հոդվածն ամրագրում է. «Եթե վարելու իրավունքից զրկված նավավարը խուսափում է վարորդական վկայականը հանձնելուց, ապա վկայականը վերցվում է սահմանված կարգով ՀՀ պետլեռտեխսկոդության փոքրաչափս նավերի պետական տեսչությունը»: Փաստորեն, գործող օրենսգրքում գոյություն չունեցող նույն մարմնի վրա է դրվում նաև փոքրաչափս նավեր վարելու իրավունքից զրկելու որոշման կատարումը:

Օրենսգրքում դեռևս օգտագործվում են նաև իրավապահ գործունեություն իրականացրած խորհրդային մարմինների ու կազմակերպությունների անվանումները: Այսպես, ժողովրդական դատավոր, շրջանային (քաղաքային) ժողովրդական դատարան, կամավոր ժողովրդական դրուժինայի շտաբ, ընկերական դատարան (39, 246, 258, 267, 279, 282, 287, 310 հոդվածներ) և այլն:

Օրենսգրքում դեռևս պահպանվում է խորհրդային տարիներին գործած կոլեկտիվ տնտեսությունների անվանումները՝ կոլտնտեսությունները և սովխոզները (107 և 143 հոդվածներ) և այլն:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ վարչական իրավախախտումների հա-

մար նշանակվող տուգանքները պատկառելի չափերի են հասնում, որոնք ոչնչով չեն զիջում քրեական օրենսգրքով սահմանված չափերին: Վերջիններիս չափերը սահմանելիս անհրաժեշտ է՝ օրենսգիրքը նկատի ունենա վարչական իրավախախտումները հանցագործություններից սահմանազատելու, տարբերակելու չափանիշները, հակառակ դեպքում դրանք որոշակի բարդություններ են ստեղծում գործնականում կիրառելիս: Կարծում ենք՝ հանցագործությունների համար սահմանվող տուգանքի նվազագույն չափը պետք է սկսվի վարչական զանցանքների համար նշանակվող տուգանքի առավելագույն չափից:

Վարչ. օր.-ը որպես տուգանքի գումարային չափանիշ օգտագործում է հանրապետությունում սահմանված նվազագույն աշխատավարձի որևէ պատիկի չափը, սակայն առանձին հոդվածներում այն օգտագործվում է կոնկրետ դրամի չափով՝ այն էլ ոչ «լուրջ» գումարի: Մասնավորապես, եթե վարչական զանցանք կատարվելու հետևանքով գույքային վնաս է պատճառվել ֆիզիկական կամ իրավաբանական անձին, ապա լիազորված մարմինը (պաշտոնատար անձը), այդ թվում նաև դատավորը, տույժ նշանակելիս իրավունք ունեն միաժամանակ լուծելու գույքային վնասը մեղավորից հատուցելու հարցը, **եթե վնասի գումարը չի գերազանցում հիսուն դրամը** (39 հոդված):

Եթե անձը չի վիճարկում թույլ տրված խախտումը, և նախագգուշացման կարգով նրա նկատմամբ նշանակվող վարչական տուժանքը կամ տուգանքը **տասը դրամից ավել չէ**, արձանագրություն չի կազմվում: Ընդ որում, տուգանքը՝ տասը դրամը, ոստիկանության աշխատակիցը ըստ օրենսգրքի կարող է գանձել խախտումը կատարելու տեղում, և տրվում է սահմանված նմուշի անդորրագիր, որը ֆինանսական խիստ հաշվետվության փաստաթուղթ է (257 հոդված):

Մանր խուլիգանության վերաբերյալ Վարչ. օր.-ի 172 հոդվածն ուժը կորցրած է ճանաչվել 2006 թ. հունվարի 14-ի ՀՀ օրենքով<sup>3</sup>: Չնայած դրանից յոթ տարի է անցել, սակայն օրենսգրքի բազմաթիվ հոդվածներում (մասնավորապես՝ 13, 20, 261, 267, 277, 284, 305) պահպանվել է օրենսգրքում գոյություն չունեցող վարչական իրավախախտման այդ տեսակը: Օրենսգրքի 305 հոդվածը նույնիսկ ամրագրում է. «Եթե մանր խուլիգանություն կատարած տասնվեցից մինչև տասնութ տարեկան անձինք ինքնուրույն վաստակ չունեն, տուգանքը գանձվում է ծնողներից կամ նրանց փոխարինող անձանցից», իսկ այդ տարիքի անձինք մանր խուլիգանություն կատարելու դեպքում ենթակա են վարչական պատասխանատվության ընդհանուր հիմունքներով (13 հոդվածի 2-րդ մաս): Թվարկված հոդվածներով սահմանվում են նաև մանր խուլիգանություն կատարած անձի վերաբերյալ նյութերը ընկերական դատարանի, հասարակական կազմակերպության կամ աշխատավորական կոլեկտիվի քննարկմանը հանձնելու կարգը (20 հոդվածի 3-րդ մաս), ոստիկանության կողմից նրան ձերբակալելու դեպքերը (261 հոդվածի 1-ին մաս), նրա ներկայության պարտադիր լինելը իր վերաբերյալ գործը քննելիս (267 հոդվածի 2-րդ մաս), գործի քննության ժամկետները (277 հոդված), վարչական տույժ նշանակելու մասին որոշումը հասարակայնությանը տեղյակ պահելը (284 հոդվածի 1-ին մաս):

Չնայած Վարչ. օր.-ի 5 հոդվածի (պատգամավորների շրջանային, քաղաքային, քաղաքի շրջանային խորհուրդների և դրանց գործադիր կոմիտեների լիազորությունները

<sup>3</sup> Տե՛ս ՀՀՊՏ, №5 (460), 25.01.06:

վարչական իրավախախտումների բնագավառում) ուժը կորցրած է ճանաչվել<sup>4</sup>, այնուամենայնիվ օրենսգրքում դեռևս պահպանվել են շրջանային, քաղաքային, քաղաքների շրջանային, գյուղական և ավանային խորհուրդների և դրանց գործադիր կոմիտեների, ինչպես նաև վերջիններիս առընթեր վարչական հանձնաժողովների և անչափահասների գործերի հանձնաժողովների անվանումները: Մի շարք հոդվածներով և դրույթներով դրանց լայն իրավունքներ են վերապահված վարչական պատասխանատվության վերաբերյալ ակտերի ընդունման, վարչական իրավախախտումների կանխման, նշված հանձնաժողովների կազմավորման, վարչական գործերի քննության և տույժերի կիրառման ոլորտներում (13, 214-217, 219-220, 281, 287 և այլն):

Վարչ. օր.-ի 214 հոդվածին համապատասխան՝ վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերը քննում են պատգամավորների շրջանային, քաղաքային, քաղաքների շրջանային, ավանային, գյուղական խորհուրդների գործադիր կոմիտեներին առընթեր վարչական հանձնաժողովները, ինչպես նաև պատգամավորների ավանային, գյուղական խորհուրդների գործադիր կոմիտեներն ու անչափահասների գործերի շրջանային (քաղաքային), քաղաքների շրջանային հանձնաժողովները և ՀՀ օրենսդրական ակտերով դրա համար լիազորված այլ մարմիններ (պաշտոնատար անձինք): Ընդ որում, վարչական հանձնաժողովները լուծում են վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսդրության համապատասխան այլ մարմինների (պաշտոնատար անձանց) իրավասությանը վերապահված գործերը (215 հոդվածի 1-ին մաս), իսկ ավանային, գյուղական խորհուրդների գործկոմները քննում են օրենսդրությամբ իրենց վերապահված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերը (215 հոդվածի 2-րդ մաս):

Որպես կոլեգիալ մարմիններ՝ վարչական հանձնաժողովները ստեղծվում են պատգամավորների համապատասխան խորհուրդների կողմից, իսկ անչափահասների գործերի հանձնաժողովները՝ պատգամավորների համապատասխան խորհուրդների կողմից (216 հոդվածի 1-ին և 2-րդ մասեր) սահմանելով այդ հանձնաժողովների նիստերի իրավազորությունը (217 հոդված):

Առանձին հոդվածներով թվարկվում է վարչական իրավախախտումների վերաբերյալ այն գործերը, որոնք ենթակա են վարչական հանձնաժողովների քննությանը: Դեռ ավելին, վերջիններս քննում են նաև այն իրավախախտումների վերաբերյալ գործերը, որոնց համար վարչական պատասխանատվություն է սահմանվում օրենսգրքի 5 հոդվածին համապատասխան, ի դեպ, հոդված, որի ուժը կորցրած է ճանաչվել դեռևս անցյալ տարի<sup>5</sup> (219 հոդված):

Վարչ. օր.-ի 13 հոդվածը, որը կանոնակարգում է անչափահասների պատասխանատվության վերաբերյալ հիմնահարցը, անմխիթար վիճակում է ինչպես պատասխանատվության իրավական ակտերի առնչությամբ, այնպես էլ թվարկված այն հոդվածների կապակցությամբ, որոնք զանցանքներ կատարելու դեպքում սահմանում են պատասխանատվություն: Նշված հոդվածին համապատասխան՝ տասնվեցից մինչև տասնութե տարեկան հասակում վարչական իրավախախտումներ կատարած անձանց նկատմամբ պետք է կիրառեն ներկայումս գոյություն չունեցող մարմնի՝ Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի նախագահության կողմից խորհրդային տարի-

<sup>4</sup> Տե՛ս ՀՀՊՏ, №66 (940), 28.12.12:

<sup>5</sup> Տե՛ս նույն տեղը:

ներին հաստատված Անչափահասների գործերի շրջանային (քաղաքային), քաղաքների շրջանային խորհուրդների գործկոմների հանձնաժողովների կանոնադրությամբ նախատեսված միջոցները:

Օրենսգրքի 53, 123-131, 160, 172, 173, 182, 190-193 հոդվածներով նախատեսված վարչական իրավախախտումներ կատարելու դեպքում տասնվեցից տասնութ տարեկան անձինք ենթակա են պատասխանատվության ընդհանուր հիմունքերով: Սակայն փաստենք, որ թվարկված հոդվածներից վեցը (123<sup>2</sup>, 124<sup>5</sup>, 127, 129, 130, 172) ուժը կորցրած է ճանաչված:

Ընդ որում, նկատի ունենալով կատարված զանցանքի բնույթն ու խախտողի անձը, նշված անձանց վերաբերյալ գործերը, բացառությամբ օրենսգրքով նախատեսված դեպքերի, կարող են հանձնվել դարձյալ գոյություն չունեցող շրջանային (քաղաքային), քաղաքների շրջանային խորհուրդների գործկոմների՝ անչափահասների գործերի հանձնաժողովների քննությանը:

Դեռ ավելին, գործող օրենսգրքին համապատասխան՝ տասնվեցից մինչև տասնութ տարեկան անչափահասներն ընդհանուր հիմունքներով կարող են ենթակա լինել վարչական պատասխանատվության ԽՍՀ Միության օրենսդրական ակտերով ուղղակիորեն նախատեսված նաև այլ դեպքերում:

Վարչ. օր.-ի 220 և 221 հոդվածները համապատասխանաբար վերաբերում են պատգամավորների ավանային, գյուղական խորհուրդների գործկոմների կողմից վարչական իրավախախտումների վերաբերյալ նախատեսված գործերի քննությանը և այն անչափահասների գործերի շրջանային (քաղաքային, քաղաքների շրջանային) հանձնաժողովների կողմից անչափահասների վարչական զանցանքների վերաբերյալ գործերի քննությանը: Անհրաժեշտ է նկատի ունենալ, որ ներկայումս անչափահասների գործերի՝ այդպիսի կարգավիճակով հանձնաժողովները գործել են խորհրդային իշխանության տարիներին:

Պատգամավորների շրջանային (քաղաքային) և քաղաքի շրջանային խորհուրդների գործկոմներին առընթեր հարբեցողության դեմ պայքարի հանձնաժողովները քննում են օրենսգրքի 159 հոդվածով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերը (222 հոդված): Սակայն փաստենք, որ 159 հոդվածը վերացվել է դեռևս 03.12.96 թ.<sup>6</sup>:

Տարօրինակ է, բայց փաստ, որ գործող Վարչ. օր.-ը բազմաթիվ հոդվածներում որպես գործող մարմիններ զուգահեռաբար օգտագործում են ինչպես պատգամավորների շրջանային (քաղաքային), քաղաքների շրջանային, ավանային, գյուղական խորհուրդները և դրանց գործադիր կոմիտեներ, այնպես էլ տարածքային պետական կառավարման մարմիններ և տեղական ինքնակառավարման մարմիններ արտահայտությունները: Միաժամանակ, մի շարք հոդվածներ լրացվել են համայնքի ղեկավար, գյուղական համայնքներ, տեղական ինքնակառավարման մարմիններ նոր հասկացություններով (152<sup>1</sup>, 154, 198<sup>2</sup>, 208, 219<sup>1</sup> հոդվածներ և այլն): Սակայն դեռևս «Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման մասին» 1995 թ. նոյեմբերի 7-ի ՀՀ օրենքով սահմանվել է, որ հանրապետության վարչատարածքային միավորներն են՝ մարզերը, համայնքները, մարզի կարգավիճակ ունեցող Երևան քաղաքը և նրա թաղային համայնքները, նաև առանձին թաղամասեր: Ընդ որում, մարզերում իրականացվում է պե-

<sup>6</sup> Տե՛ս ՀՀԱԺՏ, 1996, № 10:

տական կառավարում, իսկ համայնքներում՝ տեղական ինքնակառավարում<sup>7</sup>: Եթե վերջիններիս խնդիրներն ու գործառնությունները ըստ օրենսգրքի վերապահված են տարածքային պետական և տեղական ինքնակառավարման մարմիններին, ապա պարզ չէ, թե ով է իրականացնում այն մարմինների խնդիրներն ու գործառնությունները, որոնք առհասարակ գոյություն չունեն (խոսքը վերաբերում է շրջանային (քաղաքային), քաղաքի շրջանային, ավանային, գյուղական խորհուրդներին և դրանց գործադիր կոմիտեներին):

Անգործության են մատնված կամ էլ գոյություն չունեն նաև խորհրդային տարիներին ստեղծված ինչպես վարչական, այնպես էլ անչափահասների գործերի հանձնաժողովները: Կարծում ենք, անհրաժեշտ է ուսումնասիրել նախկին փորձը և գուգահեռ գործող մարմիններից ուժը կորցրած ճանաչել իրականում գոյություն չունեցողները և տարածքային պետական կառավարման ու տեղական ինքնակառավարման մարմիններին օժտել համապատասխան լիազորություններով, և գուցե անհրաժեշտություն առաջանա վերականգնելու վարչական հանձնաժողովները և անչափահասների գործերի հանձնաժողովները:

Վարչ. օր.-ի 20 և 21 հոդվածները սահմանում են վարչական պատասխանատվությունից ազատելու հիմքերը՝ հաշվի առնելով իրավախախտողի անձը և իրավախախտման բնույթը, ինչպես նաև կատարված վարչական իրավախախտման նվազ նշանակությունը: Նման դեպքերում իրավախախտում կատարած անձն ազատվում է վարչական պատասխանատվությունից, և գործի նյութերը հանձնվում են ընկերական դատարանի, հասարակական կազմակերպության կամ աշխատավորական կոլեկտիվի քննությանը, եթե, հաշվի առնելով կատարված իրավախախտման բնույթը և իրավախախտողի անձը, նրա նկատմամբ նպատակահարմար է կիրառել հասարակական ներգործության միջոց:

Օրենսգրքի 20 հոդվածի 2-րդ մասով սահմանված 126, 129, 133, 159, 163, 174-177 հոդվածներով նախատեսված վարչական իրավախախտումներ կատարած անձանց համար վարչական պատասխատվությունից վերը նշված հիմունքներով ազատված անձանց վերաբերյալ նյութերը կարող են հանձնվել նաև ձեռնարկություններում, հիմնարկներում, կազմակերպություններում և դրանց կառուցվածքային ստորաբաժանումներում ստեղծված հարբեցողության դեմ պայքարի հանձնաժողովի քննությանը: Ի դեպ, ինչպես արդեն նշվեց, այդ հանձնաժողովն իր գործունեությունն իրականացնում էր Վարչ. օր.-ի 159 հոդվածի հիման վրա, որի ուժը կորցրած է ճանաչվել դեռևս 1996 թ.<sup>8</sup>, 20 հոդվածի 2-րդ մասում թվարկված հոդվածներից հինգը (129, 133, 159, 163, 174) իրենց ուժը կորցրած են ճանաչվել:

20 հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ օրենսգրքի 53, 126, 129, 133, 159, 163, 165, 172, 174-177 հոդվածներով նախատեսված վարչական խախտումներ կատարած անձանց նկատմամբ կիրառված հասարակական ներգործության միջոցների մասին վերը նշված հանձնաժողովը կամ հասարակական կազմակերպությունները 10-օրյա ժամկետում պարտավոր են հայտնել նյութերն ուղարկած մարմնին (պաշտոնատար անձին): Ի դեպ, ինչպես Վարչ. օր.-ի բազմաթիվ այլ հոդվածներում, այնպես էլ սույն հոդվածում թվարկված հոդվածների զգալի մասի ուժը կորցրած է ճանաչվել (տվյալ պարագայում՝ 129, 133, 159, 163, 172, 174):

<sup>7</sup> Տե՛ս ՀՀ գործող օրենքներ, 1983-1997 թթ., Գիրք 1, Երևան, 2007, էջ 254:

<sup>8</sup> Տե՛ս ՀՀԱԺՏ, 1996, № 10:

Ըստ վարչ. օր.-ի 21 հոդվածի՝ նվազ նշանակություն ունեցող իրավախախտման դեպքում գործը քննող լիազորված մարմինը (պաշտոնատար անձը) կարող է իրավախախտողին ազատել վարչական պատասխանատվությունից և բավարարվել բանավոր նկատողությամբ:

Կարծում ենք, վարչական պատասխանատվությունից ազատվելու ինստիտուտը ինչպես բովանդակությամբ, այսպես էլ էությամբ չի համապատասխանում նոր ձևավորվող հասարակական հարաբերություններին, ուստի անհրաժեշտ է այն վերանայել:

Իրավաբանական գրականության և օրենսդրության մեջ օգտագործվում են առանձին եզրույթներ, որոնք գործածվում են միայն տվյալ իրավունքի ճյուղի բնագավառում: Սակայն օրենսդիր մարմինը երբեմն դրանք աղավաղում է: Մասնավորապես, հանրահայտ է, որ «պատժվում է» եզրույթը, որն օգտագործվում է քրեական օրենսդրության մեջ, սխալմամբ օգտագործվում է նաև «առաջացնում է» հասկացության փոխարեն, որը գործածվում է վարչական օրենսդրության մեջ: Այսպես, գործող Վարչ. օր.-ի մեջ փոփոխություններ ու լրացումներ կատարելու ժամանակ<sup>9</sup>, այսուամենայնիվ, «առաջացնում է» հասկացության փոխարեն ամրագրվել է «պատժվում է» եզրույթը (195<sup>2</sup> և 213<sup>1</sup> հոդվածներ):

Օրենսդիրը «պատժվում է» եզրույթից բխող բառակապակցությունն աղավաղել է նաև տեղական ինքնակառավարման վերաբերյալ 07.05.02 ՀՀ օրենքի 57 հոդվածի 3-րդ մասի «գ» կետում՝ «տույժի միջոց» կամ «տուժամիջոց» բառի փոխարեն ամրագրելով «պատժամիջոց» հասկացությունը:

Օրենսդրական ակտից, մասնավորապես օրենսգրքից օգտվելու, այն կիրառելու, ինչպես նաև առանձին մասի վկայակոչումը հեշտացնելու համար, կարծում ենք, անհրաժեշտ է օրենսդրական ակտի հոդվածների մասերը համարակալել արաբական թվերով: Օրինակ՝ Վարչ. օր.-ի 32 մասից կազմված 158 հոդվածում չի թվարկված, իսկ դրան հարևան 157<sup>15</sup> հոդվածը կազմված է ընդամենը երեք մասից և թվարկված է ըստ մասերի: Ի դեպ, օրենսգրքի հոդվածների ճնշող մասը թվարկված չէ ըստ մասերի, սակայն օրենսդրական տեխնիկական պարտադրում է պահպանել տերմինաբանության համաձայնեցման և միասնականության պահանջները:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի բարձիթողի վիճակը, անտարակույս, բացասաբար է ազդում իրավական պետության կառուցման հիմնախնդիրների լուծման վրա: Բացի այդ, անհրաժեշտ է նաև նկատի ունենալ, որ վարչական զանցանքներն իրենց տարածվածությամբ ավելի մեծ տոկոս են կազմում, քան հանցագործությունները, և իվերջո չպետք է անտեսել վարչական օրենսդրության հսկայական դերն օրինականության և իրավակարգի ամրապնդման, իրավախախտումների կանխման ասպարեզում:

Հանրապետությունում իրականացվող պետական կառավարման համակարգի և պետական ապարատի բարեփոխումները նպատակ ունեն նաև հաշվի առնելու *արտասահմանյան երկրների դրական փորձը*: Բնականաբար, խոսքն այդ փորձի մեխանիկական փոխառման մասին չէ: Դրա արդյունավետությունն ապահովելու նպատակով անհրաժեշտ է խուսափել մեխանիկորեն փոխառելուց, այլ հաշվի առնել հանրապետության առանձնահատկությունները, իրավական համակարգը և այլ նրբերանգներ: Հիմնախնդրի ուսումնասիրությունը պետք է ունենա ոչ միայն տեսական-իմացական, այլև կիրառա-

<sup>9</sup> Տե՛ս ՀՀՊՏ, № 66 (590), 26.12.07, նույն տեղը № 15 539, 14.03.07:



կան նշանակություն: Բացի այդ, այն թույլ է տալիս պարզել կառավարչական որոշումների մշակման և ընդունման կառուցակարգերն այն երկրներում, որոնք վարչաիրավական հարաբերություններ ունեն Հայաստանի Հանրապետության հետ: Դեռ ավելին, արտասահմանյան երկրների վարչաիրավական համակարգը ներառում է արդի պետականության զարգացման միտումները, ինչպես նաև տարբեր երկրների վարչական օրենսդրության առանձնահատկությունները: Այս առնչությամբ հանրապետության վարչական իրավունքը զգալիորեն տարբերվում է միջազգային փորձից, որը կարգավորման մեթոդներով, միասնական տեսակետներով, իրավական լուծումներով ու էությամբ դեռևս չի առանձնանում: Չնայած վերջին տասնամյակում Վարչ. օր.-ում բազմազան և բազմապիսի փոփոխություններ ու լրացումներ են կատարվել վարչական պատասխանատվության ինստիտուտի բովանդակությունը ՀՀ Սահմանադրությանը, օրենքներին և միջազգային իրավական չափանիշներին համապատասխանեցնելու նպատակով, այսուամենայնիվ դրանք իրականացվել են ոչ պատշաճ մակարդակով:

Չպետք է անտեսել նաև, որ որպես վարչաիրավական կարևոր ինստիտուտ՝ վարչական պատասխանատվությունն իրավական պատասխանատվության համակարգում բավականին լայն կիրառում ունի: Այս առումով, ունենալով վարչական պատասխանատվության առանձնահատուկ իրավական հատկանիշներ, մասնավորապես՝ որպես իրավակարգի, օրինականության ապահովման միջոց, յուրահատուկ նորմատիվ իրավական հիմք և կիրառման պայմաններ, վարչական իրավախախտումը որպես վարչական պատասխանատվության նախադրյալ կիրառվում է ֆիզիկական և իրավաբանական անձանց նկատմամբ դրա համար լիազորված վարչական մարմինների (պաշտոնատար անձանց) ու դատարանի կողմից: Ի դեպ, ուսումնասիրությունները ցույց են տվել, որ առանձին երկրներում (ԱՄՆ, Մեծ Բրիտանիա, Ֆրանսիա, Գերմանիա, Ճապոնիա և այլն) վարչական պատասխանատվության ինստիտուտը կարևոր երաշխիք է ինչպես պետական կառավարման, այնպես էլ պետական իշխանության արդյունավետ գործունեության համար:

## THE ISSUES OF REFORM OF LEGISLATION ON ADMINISTRATIVE OFFENCES

**Rafayel Yeghyan**

*YSU Chair of Constitutional Law,  
Candidate of Legal Sciences, Docent*

It has already taken a long time that it has been drafting a new code of the Republic of Armenia on administrative offence, including more than one hundred and fifty changes and amendments simultaneously since they were adopted in 1985 are still acting in Code.

In addition, there have been enacted laws, that have defined new types of administrative penalty and new higher fines. In this context, the acting Code has been overloaded with unnecessary and contradictory terms.

Many terms are in contradiction with the Constitution of the Republic of Armenia by its

content a great number of articles, and terms aren't valid and forfeit their validity, that creates certain difficulties while using the Code. For example, in some cases they are based on lapsed articles and terms. Thus the neglected state of the Code effect negatively in order to build a legal state.

## ПРОБЛЕМЫ РЕФОРМИРОВАНИЯ ЗАКОНОДАТЕЛЬСТВА ОБ АДМИНИСТРАТИВНЫХ ПРАВОНАРУШЕНИЯХ

**Рафаел Егиян**

*Канд. юрид. наук, доцент кафедры конституционного права ЕГУ*

Долгое время разрабатывается проект нового Кодекса РА об административных правонарушениях. В том же время в действующем Кодексе (1985г.) произведено более чем 150 изменений и дополнений. Кроме того, были отдельно приняты законы, которые помимо указанных изменений и дополнений устанавливают новые виды административных взысканий, а также штрафы в большом размере. Вследствие этого Кодекс обременился излишними и противоречивыми правовыми положениями. Содержание и терминология многих из них не соответствуют Конституции РА. Большое число статей и положений перестали действовать и утратили юридическую силу, что создает определенные неудобства в плане применения Кодекса. В Кодексе до сих пор употребляются названия государственных органов и термины советских времен.

Естественно, запущенное положение Кодекса отрицательно отражается на решении задач строительства правового государства.

**Բանալի բառեր** – վարչական իրավախախտում, Օրենսգիրք, փոփոխություններ և լրացումներ, վարչական պատասխանատվություն, վարչական տույժ, օրենսդրական ակտեր, Օրենսգրքի հոդվածներ և հասկացություններ, իրավական պետություն

**Key words:** *administrative offense, Code, Changes and additions, administrative responsibility, administrative penalties, legislative acts, Code articles and terms, legal state.*

**Ключевые слова:** *административное правонарушения, Кодекс, изменения и дополнения, административная ответственность, административные взыскания, законодательные акты, статьи и термины Кодекса, правовое государство.*